

ինձ խէտ ընկերովի առէլաս՝ վեռէլ գնման, մին սարգիայ 2500 թուման շախ արեա քարն ձեռնէն յինք առէց»:

«Ի ներքոյ այնր կայ վկայութիւն Խաչկայ Աւետրեան, Աղայի Մատթէոսեան, Գրիգորի Աղամալեան, Մէլքումի Դիլաքեան, Սրուկի եւ Միքայէլի Մինասեան»:10)

Ահաւաստիկ այս վաւերագրի թարգմանութիւնը.—

«Գրութեանս պատճառն այն է, որ 1669-ին Յունուար ամսոյն 21-ին Սուրաթ (հնդկական քաղաքին) նաւահանգիստը հասանք: Միջնորդ մը աղուխասենց Յովհաննէսին աղամանդ մը Յ. Բ.) կը կշռէր: Յովհաննէս իմ մօտս եկաւ եւ ըսաւ. «Ա՛յ Սիմոն, միջնորդը եկեր է եւ 159 ուղիւնոց քար մը բերեր է, ընկերութեամբ գնենք՝: Ես ըսի, որ լաւ, առնենք ընկերովի՝: Ըսաւ, լաւ, առնենք կէսուակէս՝: Այս համաձայնութիւնը կատարուեցաւ մեր մէջ: Հինգ վեց օր վերջ միջնորդը քարին տէրը իր մօտ կը բերէ: Այդ առթիւ Յովհաննէս ինձի լուր զըրկեց, որ 'եկուր քարին առեւտուրը վերջացրենք': Գացի Յովհաննէսին տունը, նստանք: Քարը 159 սուղի կը կշռէր: Գինը որոշեցինք 11,000 թուման, 15 օրէն վճարելու պարտանաւ: Զառպափ մը քարը ծախողին նուէր տըւինք, զառպափ մըն ալ միջնորդին: Այդպէս ընելով դուրս եկանք (առնէն): Յովհաննէսը ինձի ըսաւ. «Ա՛յ Սիմոն, որովհետեւ Սահակը ինձի հետ ընկեր է), մաս մը ինձի, մաս մը Սահակին եւ մաս մըն ալ քեզի բաժնեկից կ'ըլլանք՝: Ինչպէ՞ս թէ, ըսի. եթէ վնաս ընէինք, կէսը իմս էր եւ կէսը քուկդ, քանի որ Սահակին անունը առաջ չէր յիշուած: Դուն լաւ գիտես քու եւ Սահակին բաժինը՝: Երկու օր վերջ միջնորդ ուղարկեցի Պարոն Յովհաննէսին թէ՛ իմ բաժնիս դրամը շրկեմ: Ըսեր է, որ քարը ետ է տուած: Ես թէ ծախողէն եւ թէ միջնորդէն հաստատեցի որ ետ չէ տուած: Ես վախցայ, որ եթէ Յովհաննէսին հետ խօսք ընեմ, քանի որ այսքան մեծ քար է, կրնայ ըլլալ

որ Այանը կառավարէր իմանայ եւ քարը մեր ձեռքէն կ'երթայ: Քանի որ քարն ալ Սպահան կ'երթայ, հոն մեր աղաներուն կը զբեմ, որ Պարոն Աւետիքը եւ Պարոն Մինասը մեր զատը տեսնան: Յովհաննէս կուճարատ մեկնեցաւ, Պարոն Մինասը մարդ զըրկեց եւ Յովհաննէսը ետ բերին: Ըսաւ, որ քարը ընկերովի առնուած է ինձի հետ: Մէկ անգամէն 25000 թուման շահ տուաւ եւ քարը անոր ձեռքէն առաւ»:

Վկայութիւնը տակ ստորագրած են Խաչիկ Աւետրեան, Մատթէոսեան Աղա, Գրիգոր Աղամալեան, Մէլքումի Դիլաքեան, Սարուկ եւ Միքայէլ Մինասեան:

Վկայութիւնը արժէքը, նախ, իր ոճին եւ խմբագրութեան ձեւին մէջ է: Յետոյ, ան ցոյց կուտայ հայ գոհարավաճառներու առեւտուրի կերպը տեղացի միջնորդներու միջոցաւ, բնական է երբեմն առանձին, երբեմն մէկ կամ աւելի ընկերով: Դարձեալ, ան ցոյց կուտայ, որ իրենց մէջ պատահած վէճերը կը փակուէին նոյնիսկ իրենց առեւտուրի կեդրոնին՝ Նոր Զուղայի՝ առեւտրական մեծերուն վճիռով, որ թէ՛ պարտագիր էր եւ թէ՛ ընդունելի:

* * *

Հնդկաստանի մէջ կային Նոր Զուղայեցի վաճառականներ, որոնք նոյնիսկ որոշ գոհարներու մեծավաճառութիւնը ձեռք բերին Անգլիացիներէն:

Խոջա Փանոս Բալանթար կըցաւ Իսդ Ինտիա Քրմբընիի հետ առեւտրական համաձայնութիւն մը կնքել, որուն փոխարէն Անգլիացիք իրեն կարգ մը առաւելութիւններ շնորհեցին: «Որովհետեւ Խոջայ Փանոս Բալանթար մեծ Հայ վաճառական, բնակիչ Ասպահանայ ի Պարս» մեծաջան աշխատութեամբ յառաջ տարաւ զըրաշնն ընդ ասացեալ ընկերութեան, յազապս վերածելոյ զմեծ վաճառ Անգլիական նաւովք, թէ յիբմէ կողմանէ եւ թէ յայլոց համազգեաց իւրոց՝ վասն որոյ ասացեալ կուսակալ եւ ընկերութիւն ըստ ինդրոյ յիշեալ Խոջայ Փանոս Բալանթարի՝ եւ իր տրիտուր վաստակոց նորա, շնորհէ նմա եւ սերնդոցն նո-

10) «Պատ. Նոր Զուղայու», Ա. մաս, էջ 165-6: